Երվանդ Նազարեթյան

Բարդ է՝ պատկերել օրերն այս տարտամ

Բարդ է՝ պատկերել օրերն այս տարտամ,

Երկունքով վրձնել կոնատ տողերում,

Տեսնել հայացքներն այն ամեն անգամ,

Ուրտեղ էլ չկա հավատ ու ներում:

Եվ տեսնել անսեր քամին ահարկու,

Ցավալ կուրացած արյանդ համար,

Փորձիչին անկամ դարձանք խնկարկու՝

Ալեծուփ հոսքի խաղերում համառ:

Ջի հղացքներս կդառնան վկան՝

Արտապատկերը մեր սին օրերի,

Որ պառակտվել է իմ ազգը Հայկյան,

Մերժել բռունցքող ապրումը վերին:

Բայց տարփողում եմ սուր կսկիծիս մեջ

Սարդարապատի դողանշը անգին,

Որ մեզ պարուրի շարունակ, անվերջ

Հզոր խենթերի հաղթական ոգին:

Ազգիս զատվելուց կռում եմ անկամ՝

Մութ տեսիլներիս սառը դողերում,

Բարդ է՝ պատկերել օրերն այս տարտամ,

Երկունքով վրձնել կռնատ տողերում: